



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱԼՔ**

**Հետազոտության թեման`**

**Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը  
քիմիայի դասավանդման գործընթացում**

**Առարկան` Քիմիա**

**Հետազոտող ուսուցիչ` Արմինե Խաչատրյան**

**Ուսումնական հաստատություն`**

**Մխչյանի Ք. Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոց**

**Երևան 2022**

## Բովանդակություն

Ներածություն.....	3
Համագործակցային ուսուցման արդիականությունը և նշանակությունը.....	4
Համագործակցային ուսուցման նպատակներն ու խնդիրները .....	5
Կրթությունը որպես գործընթաց և արդյունք .....	6
Ուսուցման և ուսումնառության միասնությունը կրթական գործընթացում.....	6
Ուսուցման ձևերն ու մեթոդները .....	7
Ուսուցման կոլեկտիվ եղանակ .....	10
Համագործակցային ուսման կազմակերպումը.....	12
Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը .....	13
Հետազոտության ամփոփում .....	16
Եզրակացություն.....	16
Գրականություն .....	17

## Ներածություն

Դպրոցական կրթությունը ծանրաբեռնված է բազմաթիվ ուսումնական առարկաներով, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է բավականին շատ ուսումնական թեմաներ, որոնք էլ իրենց հերթին ներառում են մի շարք հասկացություններ և սկզբունքներ: Այդ առարկաներից մեկն էլ քիմիան է, որը աշակերտների մեծամասնությունը դժվարությամբ է ընկալում և յուրացնում:

Քիմիան գիտություն է, որն ուսումնասիրում է քիմիական տարրերը, նրանց առաջացրած պարզ և բարդ միացությունները, դրանց բաղադրությունը, կառուցվածքը և հատկությունները, այլ նյութերի հետ փոխազդեցության ժամանակ նրանց վարքը և փոփոխությունները: Իր բնույթով քիմիա առարկան միջանկյալ դիրք է գրավում ֆիզիկայի և կենսաբանության միջև: Այն երբեմն անվանում են կենտրոնական գիտություն, քանզի այն հիմք է ապահովում թե՛ բազային, թե՛ կիրառական գիտությունների համար [1],[2]:

Քիմիան դպրոցում ուսուցանվում է 7-րդ դասարանից սկսած: Ուսուցանողի պարտքն է, որ երեխաների մոտ քիմիայի հանդեպ սեր և հետաքրքրություն առաջացնի, որպեսզի ավարտական դասարաններում աշակերտների մոտ ցանկություն առաջանա որպես մասնագիտություն ընտրել քիմիան, քանի որ պահանջարկն այս ոլորտում բավականին մեծ է:

Իր առջև դրված խնդիրը լուծելու համար ուսուցիչը կիրառում է ուսուցման տարբեր հնարքներ, մեթոդներ, ձևեր ու միջոցներ, սակայն պահանջվող արդյունքը չի կարողանում ստանալ: Ուսուցման պրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու և այն կանոնակարգելու նպատակով ներդրվեցին առարկայական պետական չափորոշիչներ[3]:

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործություններն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Հանրակրթական էական բարեփոխումը և զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի:

Հասարակության զարգացման տեմպերի արագացմանը զուգընթաց առաջանում են նաև համամարդկային հիմնախնդիրներ(օրինակ՝ էկոլոգիական, սոցիալական, էթնիկական, և այլն), որոնք կարող են լուծվել միայն միջազգային հանրության համախմբման և միասնական գործողությունների իրականացման արդյունքում:

Այս պայմաններում կրթության գլխավոր նպատակը սովորողներին ոչ միայն կայուն, հիմնարար գիտելիքների հաղորդումն ու ուսուցումն է, այլև որոշումներ ընդունելու ակտիվ հաղորդակցվելու ունակ քաղաքացու ձևավորումն է: Նշված խնդիրների իրագործման համար անհրաժեշտ է մեր երկրում իրականացնել կրթության բովանդակության բարեփոխումներ[4]:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնող ուսուցման կազմակերպման ձևերից է համագործակցային ուսուցումը:

## **Համագործակցային ուսուցման արդիականությունը և նշանակությունը**

Նորարարական մեթոդների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են աշակերտներն ու ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու ուղիներն ու հնարավորությունները: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին, տեխնոլոգիաներն աշակերտներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի նրանք պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ հաղորդակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:

Ժամանակակից աշխարհի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային հարաբերությունների կառուցման այս փուլում նշանակալից է ոչ միայն ճանաչողական

զարգացած կարողություններով օժտված, այլ արդյունավետ հաղորդակցվող համագործակցային բավարար հմտություններ ունեցող քաղաքացիների դաստիարակումը, ինչը կրթական համակարգից պահանջում է ձևավորել ինքնուրույն սովորելու, ստեղծագործաբար մտածելու և ամենատարբեր իրավիճակներում խնդիրներին արդյունավետ լուծումներ առաջարկելու կարողություններով, ողջ կյանքի ընթացքում սովորելու ցանկությամբ և պատրաստա-կամությամբ օժտված սովորողների:

## **Համագործակցային ուսուցման նպատակներն ու խնդիրները**

Համագործակցային ուսուցման նպատակներն են.

- սովորողների անհատական մտային գործընթացների ակտիվացումը,
- աշակերտի անձի ամբողջական զարգացումը:

Հետևաբար ուսուցչի խնդիրն է դասի ժամանակ ապահովել այնպիսի գործունեություն, որին նպաստում են ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաները: Այս դեպքում աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին: Գիտելիքի յուրացումը նրա գործունեության արդյունքն է:

Համագործակցային ուսուցման խնդիրներն են.

- բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,
- աշակերտներին ծանոթացնել ինտերակտիվ մեթոդներին,
- աշակերտների մեջ ձևավորել ուսումնական գործընթացում առկա խնդիրներն առանձնացնելու և առաջադրելու կարողություններ և զարգացնել այդ խնդիրները լուծելու հմտություններ,
- սովորողների մեջ ձևավորել սովորածը կիրառելու գիտակցում,
- ստեղծել հարգանքի և փոխըմբռնման վրա հիմնված բարենպաստ կրթական միջավայր, հաղորդակցման ազատ ու բարեկիրթ մթնոլորտ:

## **Կրթությունը որպես գործընթաց և արդյունք**

Կրթական համակարգը գործառնում և զարգանում է մարդու ուսուցման և դաստիարակության կրթական՝ ուսումնադաստիարակչական գործընթացում: Կրթության մեջ որպես ներքին գործընթաց հանդես է գալիս օրգանիզմի ինքնազարգացումը: Կարևոր մշակութային ձեռքբերումների փոխանցումը և ավագ սերնդի կողմից կրտսեր սերնդի ուսուցանումը միայն այդ գործընթացի արտաքին կողմն է: Կրթության խնդիրն է մարդու զարգացումը և ինքնազարգացումը ուսուցման գործընթացում: Կրթությունը որպես գործընթաց չի դադարում մինչև մարդու գիտակցական կյանքի վերջ: Այն մշտապես փոփոխվում է ըստ նպատակի, բովանդակության, ձևի: Կրթության դիտարկումը որպես գործընթաց ենթադրում է՝

- նախ և առաջ երկու կողմերի տարբերակում՝ ուսուցանում և ուսուցում,
- կրթությունը ներկայացնում է ուսուցման դաստիարակության միասնություն,
- կրթությունը ներառում է գիտելիքների հստությունների ձեռքբերում, ուսումնագործնական գործողությունների յուրացում:

## **Ուսուցման և ուսումնառության միասնությունը կրթական գործընթացում**

Կրթության հոգեբանությունում տարբերում են կրթական գործընթացի երկու փոխկապակցված գործընթացներ՝ ուսուցանում, որն իրականացնում է սովորեցնողի կողմից և ուսուցում, որն իրականանում է սովորողի կողմից: Ուսուցման գործունեությունը սովորեցնողի գործունեությունն է: Այս գործունեության դիտարկման ժամանակ առաջանում են մի շարք հոգեբանական խնդիրներ.

- ի՞նչն է հանդիսանում ուսուցման բովանդակություն,
- ինչպե՞ս են հարաբերակցվում ուսուցման ծրագիրը, նրա բովանդակությունը և մեթոդները,
- ինչպե՞ս է ուսուցման ժամանակ իրացվում նրա հիմնական նպատակը,

- ինչպե՞ս են միավորվում զարգացումը, ուսուցանումը, դաստիարակությունը:

Ուսուցման գործընթացը հանդիսանում է միջգիտական և դիտարկվում է ամենատարբեր ասպեկտներից:

Կենսաբանության տեսանկյունից ուսուցումն իրենից ներկայացնում է ադապտացիոն գործընթաց, ֆիզիոլոգիայի տեսանկյունից՝ պայմանական ռեֆլեքսների մշակման ներդրումն ունեցող մեխանիզմների պլանավորում, հոգեբանության տեսանկյունից ուսուցումը դիտարկվում է որպես սուբյեկտի ակտիվություն, որպես գործունեություն, հոգեկան զարգացման գործոն և այլն [5]:

## Ուսուցման ձևերն ու մեթոդները

«Ուսուցման մեթոդը» բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սորեցնել (կրթության բովանդակություն), ինչու՞ ... ինչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակները), և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա):

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակները իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը, մեթոդը իրար է կապում ուսուցման նախապես պլանավորված նպատակը և վերջնական արդյունքը: Այսպիսով ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր: Յուրաքանչյուր ուսուցիչ ամեն դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

- ինչպե՞ս հաջող պլանավորել,
- ինչպե՞ս հաջող իրականացնել դասը,
- ինչպե՞ս կանխատեսել արդյունքերը,
- ինչպե՞ս հասնել նպատակներին,
- ինչպե՞ս վերլուծել հաջողությունները և բացթողումները:

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն:

Ի՞նչ է մեթոդը: Մեթոդը հունարեն բառ է (metodos), որը բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: «Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի հետևողական փոխկապակցված գործողությունների համակարգ է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը»:

Այսպիսով, ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրությունը և կիրառության կարողությունը:

Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր կամ ժամանակակից մեթոդներ:

Ավանդական են համարվում բացատրական, գննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիք) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:

### **Ի՞նչ գործոններ են ազդում համագործակցային կարողությունների ձևավորման վրա:**

Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդները, որոնք ազդում են համագործակցային կարողությունների ձևավորման վրա, ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործության մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են.

- աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի,



- աշակերտն ապավինում է ոչ այնքան հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը,
- աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար,
- աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցություն, հաղորդակցական կարողություններ,
- նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել սովորածը [6]:

Ներկա իրավիճակներում գիտելիքի ծավալն այնքան մեծ է, որ դժվար է առանձնացնել առաջնայինը երկրորդականից: Դա երևում է դպրոցական ծրագրերի բազմաթիվ տարբերակներից: Սովորողների հիմնական խնդիրն է լինում յուրացնել գիտելիքների տրված պաշարը: Շատերը կարծում են, որ կրթության մեջ գլխավորը ոչ թե գիտելիքների պաշարն է, այլ յուրաքանչյուր աշակերտի համար գիտելիքների ստացման, տեղեկատվության մշակման համար անհրաժեշտ միջոցներին տիրապետելը:

2004թ. ընդունված է «Հանրակրթության պետական կրթակարգը», որտեղ յուրաքանչյուր ուսումնական բնագավառ ներկայացված է կրթության բովանդակության բաղադրիչների միջոցով: Դրանցից մեկը հաղորդակցական կարողություններն ու հմտություններն են:

Մարդկանց փոխհարաբերությունների վրա մեծ ազդեցություն է ունենում սեփական մտքերի, հուզական վիճակների ճիշտ արտահայտումը, ինչպես նաև ուրիշին ճիշտ հասկանալը: Ըստ Դյաչենկոյի, դիդակտիկայի ուսուցումը մարդկանց միջև հատուկ կերպով կազմակերպված հաղորդակցություն է, որի ընթացքում վերարտադրվում ու յուրացվում է պատմահասարակական փորձը՝ մարդկային գործունեության բոլոր տեսակները: Այսինքն, ուսուցման որակը ուղիղ կապ ունի ուսուցման գործընթացի մասնակիցների միջև հաղորդակցման որակի հետ: Հաղորդակցման կարողություններն ու հմտություններն անհրաժեշտ են մարդուն իր մտքերի հստակ արտահայտման կամ ուրիշի մտքերի ճիշտ ընկալման համար: Եվ պարզ է, որ հաղորդակցական կարողությունները պետք է ձևավորվեն

դպրոցում հենց այն պատճառով, որ դրանց մակարդակն ազդում է ուսուցման որակի վրա, և վերջինները կարևոր գործիք են դառնում կրթության բովանդակության մյուս բաղադրիչների յուրացման համար: Հաղորդակցական կարողությունների զարգացման մակարդակից ուղղակիորեն կախված է գիտելիքների յուրացման որակը:

Դաս-դասարանային համակարգում գործում է ուսուցիչ-աշակերտական խումբ-սխեման: Նման սխեմայով աշխատելու ժամանակ հաղորդակցման կարողությունների ձևավորումը կատարվում է տարերայնորեն, որը բավարար չէ: Հաղորդակցման կարողությունների ճիշտ ձևավորման համար անհրաժեշտ է այնպիսի գործընթաց, որը հնարավորություն կընձեռնի յուրաքանչյուր աշակերտի գործուն ընդգրկվել ուսուցման գործընթացում և կարողանա ապահովել նրա անընդհատ գործունեական հաղորդակցումը ուսումնական խմբի մյուս մասնակիցների հետ: Այս դեպքում ուսուցիչը աստիճանաբար տեղեկատվություն հաղորդողից դառնում է ուսուցման գործընթացի կազմակերպիչ: Նման ուսուցման գործընթաց իրականացվում է կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ:

## **Ուսուցման կոլեկտիվ եղանակ**

Ուսուցման կոլեկտիվ եղանակը (ՈւԿԵ) ենթադրում է կրթության կազմակերպման նոր որակ, նոր բովանդակություն, որն իր մեջ առարկայական գիտելիքներից, կարողություններից բացի ներառում է նաև ոչ առարկայական ունակություններ, կարողություններ, հատկապես մտագործունեական միջոցներ, հաղորդակցման ընդհանուր կարողություններ, կոլեկտիվ աշխատանքի հմտություններ:

ՈւԿԵ-ը կրթության ոլորտի բարեփոխման մեջ դիտվում է որպես ուսուցման նոր տեխնոլոգիա, որպես ընդհանրապես կյանքի կազմակերպման նոր ձև՝ կառուցված մարդկանց հաղորդակցական նոր որակների վրա հաղորդակցական կարողություններն ու

հմտություններն ուսումնական խմբի մասնակիցների համար դառնում են գնահատման առարկա, իսկ ուսուցիչների համար՝ ուսուցման նպատակ:

ՈւԿԵ-ն առաջին հերթին ուսումնական համագործակցության տեխնոլոգիա է, որտեղ հաղորդակցական կարողությունների զարգացումը նախատեսված է ուսուցման մեթոդներով: Երկխոսության մեթոդիկաները հնարավորություն են տալիս ուսուցչին կազմակերպելու ուսուցման գործընթացը ոչ միայն յուրաքանչյուր երեխայի ունակություններին համապատասխան, այլև նրանց մեջ արդյունավետորեն զարգացնելու հաղորդակցման ընդհանուր կարողություններ: Հաղորդակցումը տեղի է ունենում նրանց միջև, ովքեր ունեն գիտելիք ու փորձ, և նրանց՝ ովքեր այն ձեռք են բերում: Ուսուցման գործընթացում յուրաքանչյուր աշակերտ լինում է մի դեպքում ուսուցիչ, մի դեպքում՝ աշակերտ: Յուրաքանչյուր մասնակցի մոտակա նպատակն է լինում ընկերոջը սովորեցնել այն, ինչ սովորել է ինքը: Ուսուցչի դերը բարձրացնում է յուրաքանչյուրի պատասխանատվության զգացումն իր գիտելիքների, ուսման ունակությունների և ընդհանուր հաղորդակցման որակի նկատմամբ: Ուսումնական պարապմունքների ընթացքում հատուկ ժամանակ է տրամադրվում խմբում աշխատանքային հմտությունների մշակման, զարգացման համար: Նախապես պլանավորվում է հաղորդակցման այն իրավիճակը, որտեղ պետք է գործի աշակերտը՝ այս կամ այն կարողության ձևավորման համար: Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ պարտադիր կերպով վարքի կանոններն էլ ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամին առաջին հերթին սովորեցնում են հաղորդակցվել՝ ձեռք բերելով հմտություններ ու կարողություններ (լսելու, հարցեր չտալու, չշտապելու, համբերելու) [7]:

Ակնհայտ է, որ դաս-դասարանային ավանդական եղանակն իրեն սպառել է համակեցության նոր՝ համագործակցային հարաբերություններում գործելու հմտություններ և կարողություններ ունեցող շրջանավարտի ձևավորման գործում: Այն բավարար չափով հնարավորություն չի տալիս սովորողների կարողություններին համապատասխան առավելագույն կրթական մակարդակ ապահովող անհատական մոտեցման համար: Մինչդեռ, ուսուցման կոլեկտիվ եղանակը հնարավորություն է ընձեռնում ուսումնական մեծաթիվ խմբում կազմակերպել անհատականացված ուսուցում՝ սովորողների համար

կազմելով անհատական ուսումնական ծրագրեր, նյութեր և միջոցներ: Աշակերտը նոր ուսումնական նյութի յուրացմանն անցնում է նախորդ նյութը յուրացնելուց հետո: Նա դառնում է ն՝ սովորող, ն՝ սովորեցնող, ն՝ ուսումնական գործընթացի կազմակերպիչ[8]:

## **Համագործակցային ուսման կազմակերպումը**

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսուցումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին, ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել սվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Համագործակցային ուսուցումը դասավանդման մեթոդների շարքում մեծ դեր ունի: Այն համակարգված, կանոնակարգված ռազմավարություն է, որը պահանջում է սովորողների կողմից համագործակցելու, միմյանց հարգելու, հանդուրժելու, մեկը մյուսի խոսքը հաշվի առնելու հմտություններ:

### **Ինչպե՞ս բարձրացնել համագործակցային մակարդակը:**

Համագործակցային ուսուցման կարևոր միջոց է խմբային աշխատանքը, որի արդյունքում սովորողները համագործակցելով ձևավորում են ընդհանուր հասկացություններ, ձեռք են բերում խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելու և այլ

հարցեր տալու հմտություններ, որոնք զգալիորեն բարձրացնում են համագործակցության մակարդակը: Աշակերտներն աշխատելով փոքր խմբերով համատեղ իրագործում են ընդհանուր որևէ նպատակ: Այն մտածողության համար ավելի բարենպաստ միջավայր ստեղծելու միջոցներից մեկն է, որի արդյունքում սովորողները մտքերը քննարկելով՝ դրսևորում են մի մակարդակ ու որակ, ինչը տվյալ անհատի հնարավորություններից դուրս է: Իհարկե, բոլոր խմբային աշխատանքները համագործակցային ուսուցում համարել չի կարելի: Այն առավել բարձր աստիճան է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր, որոնց անվանում են համագործակցային ուսուցման տարրեր: Դրանք են.

- դրական փոխկախվածություն,
- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- սոցիալական և համագործակցային հմտությունների ձևավորում,
- խմբային գործընթացի մշակում:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության, գնահատման և արժևորման համար, ինչպես նաև ապահովում է հետադարձ կապը, բարելավում է խմբային աշխատանքը:

### **Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը**

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն

իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ. ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումը աշակերտներին սովորեցնում է թե ինչպես պետք է սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցրած խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխանցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարում խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները:

Համագործակցային դասերի անցկացումը հնարավորություն է տալիս կիրառելու ուսուցման ինտերակտիվ մեթոդներ: Աշխատելով փոքր խմբերով, համագործակցելով իրար հետ յուրաքանչյուր սովորող գտնվում է բավականին շահեկան և բարենպաստ պայմաններում: Այսպես՝

- համագործակցելով ընկերների հետ նա ավելի արագ է ինտեգրվում,
- նույն ժամանակահատվածում խմբի բոլոր անդամները զբաղված են,
- համագործակցության ժամանակ բարձրանում է սովորողի ինքնագնահատականը,
- սովորողը իրավունք է ունենում ազատ ինքնաարտահայտվելու,

- ակտիվ աշխատում են թե՛ ուժեղ, թե՛ թույլ կարողություն ունեցող աշակերտները,
- օգնելով ընկերներին՝ ուժեղ աշակերտը նորից սովորում է, ամրապնդում է իր իմացածը,
- աշակերտները հնարավորություն են ստանում սովորել սեփական սխալների վրա,
- ուսուցումը վեր է ածվում հաճելի համագործակցության և այլն:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդները նպաստում են ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների, կարողությունների, արժեքային համակարգի ձևավորմանը և զարգացմանը:

Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- նոր մեթոդների կիրառում,
- փոխազդեցություն – փոխուսուցում,
- սովորողի ակտիվություն,
- համագործակցություն,
- ինքնաարտահայտման խրախուսում,
- հետադարձ կապ և այլն [9]:

Որպեսզի հստակ պատկերացում կազմենք, թե սովորողների շրջանում ինչպես են ձևավորվում համագործակցային ուսուցման կարողությունները և հմտությունները, կատարվել է հետազոտություն քիմիայի դասաժամերին, որին մասնակցել է 7-10-րդ դասարանների 100 աշակերտ: Հետազոտության հարցաշարը ներկայացված է Հավելված 1-ում:

## **Հետազոտության ամփոփում**

Հետազոտությունն անցկացնելուց հետո պարզ դարձավ, որ աշակերտները քիմիայի դասաժամերին հաճախ են անցկացնում համագործակցային դասեր: Աշակերտների պնդմամբ խմբային, համագործակցային դասերի ընթացքում իրենց աշխատանքը դառնում է արդյունավետ. կարողանում են իրար օգնել, լրացնել, լսել միմյանց կարծիքները, համբերել: Նրանք ցանկանում են ավելի հաճախ անցկացնել համագործակցային դասեր՝ կիրառելով ինտերակտիվ մեթոդներ, որովհետև նրանք նոր դասը յուրացրած, սովորած գնում են տուն, մնում է տանը ամրապնդել այն: Այն հարցին, թե ինչ կուզեիք փոխել դասապրոցեսում, աշակերտները պատասխանեցին, որ ուզում են դպրոցական լաբարատորիաները համալրվեն ավելի շատ նոր քիմիական և դիդակտիկ նյութերով, պաստառներով, որոնք ավելի հետաքրքրաշարժ կդարձնեն դասերը: Աշակերտները ցանկանում են նաև նմանատիպ դասեր հաճախակի անցկացվեն մյուս բոլոր առարկաներից:

Ի վերջո, աշակերտների մոտ ձևավորվում են տարբեր արժեքներ, որոնք նրանք կկարողանան կիրառել կյանքում, տարբեր բնագավառներում և ոլորտներում:

## **Եզրակացություն**

Այսպիսով, համագործակցային ուսուցումը դպրոցում օգնում է աշակերտներին հաղթահարել ուսուցման հետ կապված խնդիրներն ու դժվարությունները, ձեռք բերել բազմաթիվ կարողություններ ու հմտություններ, օգնում է ձևավորել սովորողների արժեքային համակարգը: Համագործակցային ուսուցման մեթոդները հնարավորություն են տալիս սովորողներին հասնել այն գիտելիքների յուրացմանը, որն իրենց անհրաժեշտ է, ինքնուրույն գտնել այն խնդիրների լուծումները, որոնք առաջադրված են: Իսկ ուսուցիչները պետք է անընդհատ գտնվեն որոնումների մեջ, քայլեն ժամանակին համընթաց, դասերի ժամանակ ստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն աշակերտների՝ համագործակցային կարողությունների ձևավորմանը և մակարդակի բարձրացմանը:



## Գրականություն

1. <http://www.encyclopedia.am/pages.php?bId=1&hId=853> : Քիմիա:
2. <https://hy.wikipedia.org/wiki/Քիմիա> : Քիմիա:
3. Հ. Գրիգորյան, Խ. Գրիգորյան: Ուսուցումը պետք է լինի բնական:  
Մանկավարժություն 5, 2015:
4. Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլը: Կրթությունը  
Հայաստանում, 2006:
5. <https://hy.wikipedia.org/wiki/Կրթություն> : Կրթություն:
6. <https://www.slideshare.net/torosian/ss-9876301> Ուսուցման մեթոդներ:
7. Օ. Դուդումյան: Ընդհանուր հաղորդակցման կարողությունները որպես հանրակրթական բաղադրիչ: Մանկավարժություն 5, 2005:
8. Կրթօջախներ: Մանկավարժություն 1, 2011:
9. Լ. Վերդյան: Ինտեգրված պարապմունքները՝ որպես ուսուցման արդյունավետությունը բարձրացնող միջոց: Նախաշավիկ 8, 2012

## Հարցաշար աշակերտների համար

1. Հաճա՞խ եք անցկացնում համագործակցային դասեր:
  - ա) այո
  - բ) ոչ
  - գ) երբեմն
2. Դասերի ժամանակ խմբով աշխատելը
  - ա) արդյունավետ է
  - բ) դժվար է
  - գ) անօգուտ է
3. Համագործակցային դասերի ժամանակ ինտերակտիվ մեթոդների կիրառումը նպաստում է
  - ա) գիտելիքների յուրացմանը
  - բ) արժեքային համակարգի ձևավորմանը
  - գ) հմտությունների և կարողությունների զարգացմանը
  - դ) բոլորը ճիշտ են
4. Գիտելիքների յուրացումը ուսուցման  $n^{\circ}$  մեթոդով է ավելի հեշտ:
  - ա) ավանդական
  - բ) համագործակցային, ինտերակտիվ
5. Համագործակցային դասերի ժամանակ ինտերակտիվ մեթոդների կիրառումը զարգացնու՞մ է աշակերտների կարողությունները և հմտությունները:
  - ա) այո
  - բ) ոչ
6. Կցանկանայի՞ք հաճախ և բոլոր առարկաներից անցկացնել համագործակցային դասեր՝ կիրառելով ինտերակտիվ մեթոդներ:
  - ա) այո
  - բ) ոչ

7. Ինչպիսի՞ արդյունք են տալիս խմբային աշխատանքները:

- ա) դասի յուրացումը հեշտանում է
- բ) խմբերի միջև ձևավորվում է առողջ մրցակցություն
- գ) խմբում զարգանում է թիմային մտածողությունը
- դ) բոլորը ճիշտ են

8. Ինչպիսի՞ փոփոխություններ կմտցնեիք դասապրոցեսում:

9. Ինչպիսի՞ արժեքներ են ձևավորվում համագործակցային դասի ժամանակ:

- ա) լսելու կարողությունը
- բ) համբերելու կարողությունը
- գ) միմյանց օգնելու կարողությունը
- դ) բոլորը ճիշտ են

10. Նշե՛ք այն մեթոդները, որոնք հաճախ եք կիրառում քիմիայի դասաժամին խմբային աշխատանքների ժամանակ: